



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 սեպտեմբերի 2017 թվականի N 199-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 54-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 56-րդ հոդվածի, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 03 ակտը՝ **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականության հողամասերի օտարման կարգը խախտելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավար *Ավերիս Մուրադյանին* նշանակել տուգանք՝ *նվազագույն աշխատավարձի հարյուրհինգամյակի չափով:*

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ *Գուրգեն Ավերիսյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2017 թվականի սեպտեմբերի 26
ք. Հրազդան




Կ. ԳՈՒԼՈՅԱՆ